

**ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԱՌԱՋԻՆ ՎԱՎԵՐԱԳՐՈՂԸ. ՇԱԿԱՐՇ
ՄԻՍԱԳԲԵԱՆ, խմբ.՝ Ե. Փամպուքեան, «Խաչիկ Պապիկեան
հիմնադրամ» – թիւ 9, Անթիլիաս, 2017, 483 էջ***

Բանալի բառեր – Օսմանյան կայսրություն, Կ. Պոլիս, Դաշնակցության «Առժամյա մարմին», հայ մտավորականների ձերբակալություններ, հայերի զանգվածային կոտորածներ և տեղահանություն:

2017 թ. Անթիլիասում վաստակաշատ պատմաբան Երվանդ Փամպուքեանի առաջաբանով, խմբագրությամբ և ծանոթագրություններով լույս է տեսել ՀՅԴ Պոլսի կենտրոնական կոմիտեի անդամ, ճանաչված հրապարակագիր Շավարշ Միսաքյանի¹ նամակների, հոդվածների և հուշերի համահավաք ժողովածուն:

Անցած հարյուրամյակի ընթացքում Հայոց ցեղասպանության վերաբերյալ տարբեր երկրներում հրատարակվել են արխիվային փաստաթղթերի² և Օսմանյան կայսրությունում ծառայող օտարերկրացի դիվանագետների գեկուցագրերի³ հիման վրա կազմված բազմաթիվ ժողովածուներ, ինչպես նաև ականատես-վերապրողների հուշագրություններ⁴, սակայն Շավարշ Միսաքեանի նամակները, հոդվածներն ու հուշերն ամփոփող այս ժողովածուն

* Ընդունվել է տպագրության 12.09.2021:

- 1 Որպես խմբագիր և կուսակցական գործիչ Միսաքյանը գտնվում էր թուրքական գաղտնի ծառայությունների ուշադրության կենտրոնում: Նրա անունը ևս ընդգրկված էր ձերբակալման ենթակա հայ մտավորականների ցուցակում, և միայն պատահականությամբ հաջողվեց խուսափել ձերբակալությունից: ՀՅԴ Պոլսի կենտրոնական կոմիտեի անդամների հետապնդումների պայմաններում նա ընդհատակում ստեղծում է կուսակցության Պոլսի «Առժամյա մարմինը» և մինչև իր ձերբակալությունը համակարգում դրա գործունեությունը (տես Մեծ եղեռնի առաջին վավերագրողը. Շավարշ Միսաքեան, խմբ.՝ Ե. Փամպուքեան, Անթիլիաս, 2017, էջ 14):
- 2 Տես Գеноцид армян в Османской империи. Сборник документов. Под редакцией М. Нерсисяна, второе, дополненное издание, Ер., 1983, The Armenian genocide dokumentation, Institute für Armenische Fragen, N 1, München, 1987, Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Փափազյանի, Եր., 1988, United States Official Documents on the Armenian Genocide, A. Sarafian, Volume II, Massachusetts, 1994, Русские источники о геноциде армян в Османской империи 1915-1916. Сост. Г. А. Абрамян, Т. Г. Севан-Хачатрян, Ер., 1995, Gotikian G., La question arménienne, de la vielle de la grande guerre au traité de Lausanne d'après les archives françaises, thèse, t. 3, Université de Saint-Etienne, 1997, Փափազյան Ա., Թուրքական վավերագրական նյութեր Օսմանյան կայսրության ոչ մահմեդական ժողովուրդների մասին (1839-1915 թթ.), Եր., 2002, Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарий. Сост., отв. редактор Ю. Барсегов, т. 1, М., изд. «Гардарики», 2002:
- 3 Տես Papers Relating to Foreign Relations of the United States. 1915: Supplement: The World War, Washington, 1928, Les Grandes Puissances, L' Empire Ottoman et les Arméniens dans les Archives Françaises, 1914-1918, Paris, 1983, Армянский вопрос и геноцид армян в Турции (1913-1919), Материалы Политархива Кайзеровской Германии, сост., отв. редактор, автор примечаний д.и.н., профессор В. Микаелян, Ер., 1995, Österreich-Armenien, 1872-1936 Faksimilfasomling diplomaticher Artenstricke, t. VI, 1915-1916, Wien, 1995:
- 4 Տես Հայոց ցեղասպանությունը օսմանյան թուրքիայում. Վերապրածների վկայություններ, փաստաթղթերի ժողովածու, հատ. I, II, III, խմբ.՝ Ա. Վիրաբյան, Եր., 2012, Ավազյան Վ., Հայոց ցեղասպանություն. ականատես վերապրողների վկայություններ, Եր., 2015:

ՎԷՐ ՀԱՄԱՆԿԱԿԱԿԱՆ ԿԱՆՈՒՆ, ԺԳ (ԺԹ) ԿՐԱԿԻ, ԹԻՎ 3(75), ԿՈՒԽԱ-ՍԵՂԱԿՆԵՐԵՐ, 2021

դրանց շարքում առանձնահատուկ տեղ է գրավում: Եվ քանի որ ժողովածուի տպագրությունից հետո անցած շուրջ 4 տարվա ընթացքում մեզ չի հանդիպել դրա իրական արժեքը գնահատող որևէ գրախոսություն, փորձենք ավելի մանրամասնորեն ներկայացնել խնդիրը:

Խոսքը Հայոց ցեղասպանության ականատես-վերապրողի սովորական հուշագրության մասին չէ, քանզի Շավարշ Միսաքյանի աշխատությունը չի սահմանափակվում այդ դժնդակ պայմաններում լոկ սեփական անձի կամ ընտանիքի փրկության պատմության ներկայացմամբ: Որպես ՀՅԴ Պոլսի կենտրոնական կոմիտեի անդամ և իր գաղտնի գործունեությունը շարունակող ՀՅԴ Պոլսի ժամանակավոր կառույցի պատասխանատու՝ Շավարշ Միսաքյանը եղել է այն կապող օղակը, որը Հայոց ցեղասպանության օրերին Արևմտյան Հայաստանից և Օսմանյան կայսրության հայաբնակ այլ տարածքներից ստացվող տեղեկատվությունը փոխանցել է արտասահման: Իբրև ընդհատակում իր գաղտնի գործունեությունը շարունակող ՀՅԴ Պոլսի ժամանակավոր կառույցի պատասխանատու՝ նա ՀՅԴ հետախուզական ցանցի միջոցով մինչև վերջ կապ է պահել ողջ մնացածների հետ, նրանցից արժեքավոր ու հավաստի տեղեկություններ ստացել և գաղտնի ծածկագրերով ուղարկել արտասահման: Հավաքելով և հրապարակելով հայ ժողովրդի նկատմամբ իրագործված ոճրի մասին նման հավաստի տեղեկությունները՝ Միսաքյանը փաստորեն դարձել է Մեծ եղեռնի առաջին վավերագրողը⁵:

Աշխատությունը բաղկացած է երեք բաժիններից: **Առաջին** բաժնում ՀՅԴ հետախուզական ցանցի բեկորներից ստացված տեղեկությունների հիման վրա 1915 թ. ապրիլի 27-ից մինչև հոկտեմբերի 5-ը Միսաքյանի գրած 55 նամակներն⁶ են, իսկ **երկրորդում**՝ նրա՝ Սոֆիայում լույս տեսնող «Հայաստան» թերթում տպագրված հոդվածները: Երբ 1915 թ. աշնանը Եռյակ դաշինքին միացած Բուլղարիան հոկտեմբերի 14-ին մտավ պատերազմի մեջ, Միսաքյանի նամակների և հոդվածների շղթան խափանվեց: Բուլղարական կառավարությունը կասեցրեց ՀՅԴ Բալկանների կենտրոնական կոմիտեի գործունեությունը և անուղղակիորեն կարգադրեց դադարեցնել «Հայաստան» թերթի հրատարակումը⁷: 1916 թ. մարտի 16-ին Կ. Պոլսում Շ. Միսաքյանի ձերբակալությունից հետո նրանից ստացվող տեղեկատվության հոսքը վերջնականապես դադարում է⁸: Աշխատանքի **երրորդ** բաժնում «Յառաջ» թերթում հրատարակված

5 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 10:

6 Անշուշտ, Միսաքյանի ոչ բոլոր նամակներն են տեղ հասել, դրանց մի մասը կորել է ձանապարհին: Գրությունների մի մասն էլ պակասավոր է, ինչը հավանաբար կապված է գաղտնի թանաքով գրվածքները գաղտնագրծելու դժվարության հետ: Թուրքական իշխանությունների գրաքննությունը շրջանցելու նպատակով Միսաքյանը նամակները ծածկագիր գաղտնի թանաքով գրում էր ֆրանսիական, ռուսական և բուլղարական թերթերի լուսանցքներում և ազատ հատվածներում: Դրանք վերծանվում ու արտագրվում էին բալկանյան կենտրոնական կոմիտեում, իսկ դրանցից կազմված քաղվածքներն ուղարկվում էին նշված հասցեներով (տե՛ս նույն տեղում, էջ 16):

7 Տե՛ս նույն տեղում, էջ 237:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

«Տերևներ դեղնած յուշատետրէ մը» գրքույկն է, որում ներկայացվում են Միսաքյանի թաքստոցային կյանքի և Պոլսի ոստիկանության կողմից ձերբակալվելուց հետո ապրած ժամանակահատվածի դրվագները:

Միսաքյանի նամակներն ու հոդվածներն աչքի են ընկնում համակողմանի և սթափ վերլուծություններով: Անընդհատ հետապնդման ու ձերբակալման վտանգի պայմաններում նա կարողանում էր հասկանալ կատարվող դեպքերի պատճառները, պատկերացնել դրանց հետագա ընթացքն ու կանխատեսել ահավոր հետևանքները հայ ժողովրդի համար:

Միսաքյանն իր գրություններում անընդհատ շեշտում է թուրքական իշխանությունների կողմից հայերին իսպառ ոչնչացնելու քաղաքականության նախապես ծրագրված լինելու մասին: 1915 թ. մայիսի 25-ին օսմանյան խորհրդարանի պատգամավոր Վարդգես Սերենկյուլյանի հետ հանդիպման ժամանակ Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ ներքին գործերի նախարար Թալեաթը, նրան բացահայտ ասել էր. «Զանի որ դուք մեր նեղ օրերին բարենորոգում, ինքնավարություն և այլ պահանջներ էիք ներկայացնում, հիմա մենք էլ մեր լայն օրերին հայերին ցիրուցան ենք անելու, որ մինչև 50 տարի բարենորոգման կամ ինքնավարության մասին չկարողանաք խոսել...»⁹: Վարդգեսի այն ճշտող հարցին, թե Համիդի գո՞րծն են ուզում շարունակել, Թալեաթն առանց վարանելու դրական պատասխան է տվել:

Հաջորդ հոդվածում հեղինակը նշում է, որ «Իթթիհատը» հայությանը ջիհադ էր հայտարարել՝ սպառնալով նրանց կյանքին, պատվին, սեփականությանը և կրոնին, որը մինչ այդ պահը, թվում էր, թե հարգվում էր: Միսաքյանը նկատում է, որ Նազըմը, Բեհաէդդին Շաքիրը, Էնվերն ու Թալեաթը հայերի բնաջնջման ծրագիրն իրագործում էին՝ մոռանալով անգամ պատերազմը, որը քայքայում էր իրենց պետության հիմքերը¹⁰: Փաստերն ու իրադարձությունները համադրելով՝ հեղինակն այն հիմնավոր եզրակացությանն է հանգել, որ հայերի բնաջնջման հարցում թուրքական իշխանությունները թերևս ստացել են օտարների* հավանությունը, հակառակ պարագայում ո՛չ Էնվերը և ո՛չ էլ Թալեաթը չէին հանդգնի նման ծրագիր մշակել, առավել ևս գործադրել¹¹:

Միսաքյանից ստացված նամակների ու հոդվածների հիման վրա հենց հանցագործության կատարման պահին հստակ ժամանակացույցով ճշգրիտ կերպով բացահայտվել են թուրքական իշխանությունների կողմից հայ բնակչության նկատմամբ հետևողականորեն իրագործված ցեղասպանական քաղաքականության հաջորդական փուլերը՝ 1. հայերի

9 Նույն տեղում, էջ 69: Հետաքրքրական է, որ Թալեաթի մատնանշած 50 տարին համընկնում է 1965 թ. հայոց պահանջատիրական պայքարի բուռն վերելքին:

10 Տե՛ս նույն տեղում, էջ 255:

* Թերևս նկատի ունի Օսմանյան կայսրության դաշնակից Եռյակ դաշինքի տերություններին և առաջին հերթին Գերմանիային:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 261:

զինաթափում, օսմանյան բանակ հայ տղամարդկանց զորակոչ և հետագա ոչնչացում, 2. հայ մտավորականության ձերբակալություն, աքսոր և հետագա ոչնչացում, 3. հայ բնակչության զանգվածային տեղահանություն և բնաջնջում, 4. «մահվան քարավաններում» հրաշքով փրկվածների վերջնական ոչնչացում համակենտրոնացման ճամբարներում:

Միսաքյանը հայերի ծրագրված ոչնչացման նախապատրաստական քայլ է համարում հայ բնակչության զինաթափումը, ինչը, օրինակ, Կեսարիայում սկսեց իրականացվել 1915 թ. փետրվարից: Հայերի զինաթափումը, որպես կանոն, իրականացվում էր հետևյալ սցենարով. հայկական բնակավայրը շրջապատվում էր քրդական հրոսակախմբերի կամ «Հատուկ կազմակերպության» («Թեշքիլաթ-ը մահսուսե») ուժերի կողմից, ինչից հետո պահանջվում էր մի քանի ժամվա ընթացքում հանձնել բոլոր զենքերը, հակառակ պարագայում սպառնում էին հողին հավասարեցնել բնակավայրը: Դա իրագործվում էր անգամ եղած զենքերի պահանջը բավարարելու դեպքում¹²:

Զինաթափմանը զուգահեռ՝ օսմանյան բանակ զորակոչելու անվան տակ իրականացվում է 18-45 տարեկան ավելի քան 60 հազար հայ տղամարդկանց մեկուսացնելու և բանվորական գումարտակներում ոչնչացնելու ծրագիրը¹³: Այդ կերպ դյուրացվում էր Արևմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մյուս հատվածներում անպաշտպան մնացած հայ բնակչության հետագա ոչնչացումը: Թուրքական իշխանությունները ռուսական զորքերից Սարիղամիշի ճակատամարտում կրած խայտառակ պարտության մեղքը փորձեցին բարդել հայ զինվորների վրա: Թուրքական գլխավոր հրամանատարության 1915 թ. փետրվարի 25-ի հրամանով արգելվեց հայ զինձառայողներին նշանակել հրամանատարական պաշտոններում¹⁴, ինչը, ըստ էության, ազդանշան դարձավ օսմանյան բանակում ծառայող հայ զինվորների զինաթափման և ոչնչացման համար: Բոլոր գավառներից լուրեր էին ստացվում, որ սպաների հրամանով հայ զինվորներին 80-100 հոգանոց խմբերով տանում էին խուլ վայրեր և գնդակահարում¹⁵:

Միսաքյանը մանրամասներ է ներկայացնում, թե ինչպես Բիթլիսը վերագրավելուց հետո թուրքերը վրեժ լուծեցին՝ դաժանաբար սպանելով հայ ժանդարմներին ու զինվորներին¹⁶: Լեփսիուսից ստացված տեղեկությունների հիման վրա էլ նա հայտնում էր, որ թուրքական իշխանությունները որոշել են ձերբակալել նաև օսմանյան բանակում ծառայող բոլոր հայ բժիշկներին¹⁷: Հայ տղամարդկանց օսմանյան բանակ զորակոչելով ու կոտորելով՝ երիտթուրքա-

12 Տե՛ս **Авакян А.**, Геноцид 1915 г. Механизмы принятия и исполнения решений, Ер., 1999, էջ 89:

13 Տե՛ս **Սահակյան Ռ., Խուրդավերդյան Վ.**, Հայերի ցեղասպանությունը տասնամյակների լույսի ներքո, Եր., 1995, էջ 23:

14 Տե՛ս **Yavuz E.**, Armenian Claims in the Light of the Historical Documents, "Turkish Review", Ankara, Spring 1986, Vol. 1, N 3, էջ 26:

15 Տե՛ս Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբ. **Ս.Գ. Ներսիսյան**, Եր., 1991, էջ 470:

16 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 235:

17 Տե՛ս նույն տեղում, էջ 152:

կան իշխանությունները հայերին գրկեցին ինքնապաշտպանվելու հնարավորությունից՝ հայկական բնակավայրերում թողնելով արքորի և բնաջնջման ենթակա հայ բնակչությանը¹⁸:

Միասքյանը փաստերով հիմնավորում է, որ նույն դաժանությունը ցուցաբերվում էր նաև հայ զինվորների ընտանիքների նկատմամբ: Թեև ձևականորեն հայ զինվորականներին թույլ էր տրվում միջնորդել, որ իրենց ծնողներն ու ընտանիքները չտեղահանվեին, սակայն գործնականում միայն եզակի դեպքերում էին նրանց հետ դարձնում գաղթի ճանապարհից¹⁹:

Առանձնահատուկ կարևորություն ուներ հայ մտավորականության ազդեցիկ ներկայացուցիչների ձերբակալումը, արքորն ու հետագա ոչնչացումը, քանզի նրանք թուրքական իշխանությունների կողմից դիտվում էին իբրև խոչընդոտ, որ կարող էր խանգարել հայ բնակչության իսպառ բնաջնջման ծրագրի իրագործմանը: Ինչպես հայտնի է, հայ մտավորականության դեմ առաջին գործողությունն իրականացվեց 1915 թ. ապրիլի 24-ին և հաջորդող մի քանի օրերին Կ. Պոլսում և այլ քաղաքներում: Նախապես կազմված ցուցակներով ոստիկանությունը ձերբակալում է 800-ից ավելի²⁰, իսկ թուրքական աղբյուրի համաձայն՝ 2.345 հայերի²¹, որոնց թվում էին օսմանյան խորհրդարանի պատգամավորներ, բանաստեղծներ, գրողներ, հրապարակախոսներ, լրագրողներ, գիտնականներ և հոգևորականներ: Ինքը՝ Միասքյանը, ընդգրկված լինելով ձերբակալվողների ցուցակում և հրաշքով փրկվելով կալանավորումից, պնդում էր, որ, առանց հայ մատնիչների* բացահայտ կամ գաղտնի աջակցության, թուրքական իշխանություններին չէր հաջողվի նախ ցուցակագրել, իսկ այնուհետև հեշտությամբ հայտնաբերել ու ձերբակալել հայ մտավորականության ներկայացուցիչներին²²: Իր նամակներում նա մանրամասներ է հաղորդում օսմանյան խորհրդարանի պատգամավոր Արշակ Վռանյանի դավադիր սպանության²³, ինչպես նաև Գրիգոր Զոհրապի ու Վարդգես Սերենկյուլյանի ձերբակալման, արքորի ու սպանության վերաբերյալ²⁴:

Հայ տղամարդկանց և մտավորականությանը ոչնչացնելուց հետո թուրքական իշխանություններն անցան իրենց հայասպան քաղաքականության հաջորդ փուլին՝ անպաշտպան մնացած կանանց, երեխաների և ծերերի բռնի տեղահանմանը: Այս հանցավոր գործողություններին «օրինական»

18 Տե՛ս նույն տեղում, էջ 279-280:

19 Տե՛ս նույն տեղում, էջ 230:

20 Տե՛ս **Սահակյան Ռ., Խուրավերդյան Կ.**, նշվ. աշխ., էջ 24:

21 Տե՛ս **Halacoglu Yu.**, Die Armenien frage, Klagenfurt-Wien-Ljubljana-Sarajevo, 2006, էջ 60:

* Հայ մատնիչներից ու դավաճաններից նշվում են Արշավիր Յասյանի, Հմայակ Արամյանի և Վահե Իհսանի (Եսայան) անունները, իսկ թուրքական գաղտնի ծառայությունների հետ համագործակցող հայագի գործակալներից հիշատակվում է Արթին (Հարություն) Մկրտչյանը: Նրանք բոլորը հետագայում ոչնչացվել են հայ վրիժառուների կողմից (տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 450):

22 Տե՛ս նույն տեղում, էջ 245:

23 Տե՛ս նույն տեղում, էջ 52:

24 Տե՛ս նույն տեղում, էջ 152, 155:

տեսք հաղորդելու նպատակով Թալեաթի առաջարկությամբ երիտթուրքերի կառավարությունը 1915 թ. մայիսի 30-ին ընդունեց «**Պատերազմական շրջանում կառավարության գործողությունների դեմ հանդես եկող անձանց նկատմամբ ռազմական իշխանությունների կողմից ձեռնարկվելիք միջոցառումների մասին**» (այսուհետ՝ «Տեղահանության մասին») ժամանակավոր օրենքը, որով կարգադրություններին խոչընդոտ հանդիսանալու դեպքում զինվորական իշխանություններին իրավունք էր տրվում տեղահանելու գյուղերի և ավանների ողջ բնակչությանը²⁵: «Տեղահանության մասին» օրենքի ընդունումից հետո տեղահանությունը կասեցնելու բոլոր ջանքերն ասարդյուն են անցնում. Գերմանիայի դեսպան Վանգենհայնը մերժում է միջամտել, իսկ Էնվերը, այդ պատրվակը շահարկելով, հայերին պատասխանում է, թե նրանք օտարներին են դիմում, իսկ իրենք օտարների ասելով ոչինչ չեն անելու²⁶:

Միսաքյանն ընդգծում է, որ հայերին բնաջնջելու քաղաքականության՝ բռնի տեղահանության փուլը թուրքական իշխանությունները ոչ պատահականորեն սկսեցին իրականացնել հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի օջախներից՝ Զեյթունից²⁷, Վասպուրականից և Տարոնից՝ նրա դիմադրական ոգին կոտրելու և համախմբվածությունից զրկելու համար²⁸: Բռնի տեղահանությամբ թուրքական իշխանությունները հայ բնակչությանը կտրում էին հայրենի օջախներից և, թշնամաբար տրամադրված մահմեդականներով բնակեցված տարածքներ փոխադրելով, թողնում վերջիններիս հայեցողությանը²⁹:

Սկզբնական շրջանում Արևմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից հայ բնակչության բռնի տեղահանությունների և զանգվածային կոտորածների մասին տեղեկատվության մեծ հոսք էր գալիս «Առժամյա մարմին», սակայն հետագայում տեղեկություններն աստիճանաբար սակավանում են, իսկ վերջում տեղեկություններ էին ստացվում միայն Սեբաստիայի աղբյուրից, որը կարճ ժամանակ անց նույնպես լռում է³⁰:

Միսաքյանն արձանագրում է այն կարևոր փաստը, որ Հալեպի նահանգապետ Ջելալ բեյը մերժել է կատարել հայերին տեղահանելու և բնաջնջելու մասին Թալեաթի հրամանը՝ հայտարարելով. «Ես այս նահանգի վալին եմ, չեմ կարող դառնալ նրա դահիճը», ինչից հետո անմիջապես պաշտոնանկ է արվել³¹: Հաջորդիվ տեղեկություն է ստացվում, որ նահանգապետերի «երիտասարդացման» պատճառաբանությամբ Էնվերի գլխավորությամբ կառավ-

25 Տե՛ս **Մեկան Ջադե Ռիֆաթ**, Օսմանեան հեղափոխութեան մութ ծալքերը եւ Իթթիհատի հայացինջ ծրագրերը, Եր., 1990, էջ 119 -120: Տե՛ս նաև **Սահակյան Ռ.**, Ցեղասպանության պատմությունից, Եր., 1990, էջ 291:

26 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 142:

27 Տե՛ս **Պողոսյան Հ. Մ.**, Ջեյթունի պատմություն, Եր., 1969, էջ 402:

28 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 246-247:

29 Տե՛ս **Авакян А.**, նշվ. աշխ., էջ 91:

30 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 80:

31 Տե՛ս նույն տեղում, էջ 96:

արությունն այդ պաշտոններում նշանակում է այնպիսի անձանց, որոնք անվերապահորեն կատարելու էին հայերին տեղահանելու և բնաջնջելու վերաբերյալ մայրաքաղաքից ստացվող հրամանները³²:

Միսաքյանի հաղորդած տվյալներից ամբողջությամբ բացահայտվում է երիտթուրքերի հայաջինջ քաղաքականության էությունը: Այսպես՝ Կիրասունում և Սամսունում իսլամացված հայ ընտանիքների՝ իրենց առաքելական հավատքին վերադարձն անհնար դարձնելու նպատակով թուրքական իշխանությունները կարգադրել էին իսլամ ընդունած հայերի կանանց անմիջապես տալ թուրքերին, իսկ կրոնափոխված հայ տղամարդկանց ամուսնացնել թրքուհիների հետ³³: Ավելին՝ իսլամացված ընտանիքների երեխաները հանձնվում էին իշխանություններին, որոնք աղջիկներին անծանոթ վայրեր հարս էին ուղարկում, իսկ տղաներին, մանավանդ՝ անչափահասներին, տեղավորում էին պետական որբանոցներում և մահմեդականների տներում, որպեսզի երբ իսլամացած հայը որոշեր վերադառնալ իր կրոնին, գրկված լինեք ամեն ինչից՝ ընտանիքից, կնոջից և երեխաներից³⁴: Ինչ վերաբերում է սպանված հայերի որբացած մանուկներին, ապա թուրքական իշխանությունների ցինիզմը հասնում է այնտեղ, որ նրանց խնամելու համար հատուկ հաշիվ են բացում, իսկ Թալեաթը Եվրոպային կոչ է անում ֆինանսապես օգնելու, որ այդ երեխաներն իսկական օսմանցիներ մեծանան³⁵:

Միսաքյանի վկայությամբ՝ թուրքական իշխանություններն այն աստիճանի են սաստկացնում հայերի բնաջնջման քաղաքականությունը, որ ոստիկանությունը հայտարարում է, որ, անկախ հպատակությունից, ոչ մի հայ չի կարող երկրից հեռանալ³⁶: Բացի այդ՝ որոշում է կայացվում իրենց տներում հայերին թաքցնող մահմեդականներին հանձնելու ռազմական դատարաններին, որտեղ նրանց մահապատիժ էր սպառնում³⁷:

Իր նամակներում Միսաքյանը պատմում է նաև պոլսահայության շրջանում տարածվող այն խոսակցությունների մասին, որ պատրիարքարանը կարող է ներքին գավառներ տեղափոխվել, իսկ կառավարությունը Պոլսի հայությանը տեղահանելու համար լուր միջադեպի է սպասում, ինչը կարող են հրահրել հենց իշխանությունները³⁸: Մյուս կողմից՝ ներկայացվում են հայերին ֆիզիկապես ոչնչացնելու քաղաքականության պատճառով երիտթուրքական կառավարության վրա գործադրվող ինչպես արտաքին, այնպես էլ ներքին ճնշումները: Այսպես՝ Հռոմի պապ Բենեդիկտոս XV-ի նվիրակը Թալեաթին բողոք էր ներկայացրել, ինչից հետո հայտարարվել է, որ կաթոլիկ և բողոքական հայեր-

32 Տե՛ս նույն տեղում, էջ 269-270:

33 Տե՛ս նույն տեղում, էջ 269:

34 Տե՛ս նույն տեղում, էջ 287-288:

35 Տե՛ս նույն տեղում, էջ 312:

36 Տե՛ս նույն տեղում, էջ 218:

37 Տե՛ս նույն տեղում, էջ 235:

38 Տե՛ս նույն տեղում, էջ 204:

ին հանգիստ կյանքն են: Ֆինանսների նախարար Զավիդը կառավարությանը խորհուրդ է տվել դադարեցնելու հավածանքները, քանի որ հայերը Եվրոպայում մեծ աղմուկ են բարձրացրել³⁹: Դրան զուգահեռ՝ նահանգապետ Ահմեդ Ռիզան հարցապնդում է արել Սենատի նախագահին՝ հայերի նկատմամբ կատարվող սպօրինությունների վերաբերյալ, որոնք խախտում են նրանց կյանքի և սեփականության իրավունքը⁴⁰: Հայերի սպանությունների գործով ներկայացված նրա հարցապնդումն իրարանցում է առաջացրել կառավարությունում, բայց Սենատում գտնվել են Ահմեդ Ռիզայի հետ համաձայնողներ: Կառավարությունը պահանջել է հետ վերցնել հարցապնդումը՝ խոստանալով Սենատի նախագահի գլխավորությամբ հատուկ հանձնաժողով ստեղծել, որն այդ հարցը կներկայացնի կառավարության ուշադրությանը⁴¹: Թերևս այս ճնշումների ազդեցությամբ «Իթթիհատը» ժողով է հրավիրել և այտարարել, որ գաղթականները Սիրիայի և Միջագետքի անապատներ չեն աքսորվի և կմասն իրենց հասած տեղերում, Պոլսից տեղահանություններ չեն կատարվի, իսկ ձերբակալություններն ու տեղահանությունները կգործադրվեն միայն «կասկածելի» անձանց հանդեպ⁴²: Նման քարոզչական հնարքներով թուրքական իշխանությունները փորձում էին հանգստացնել միջազգային հանրությանը և բթացնել կայսրության հայ և քրիստոնյա մյուս ժողովուրդների զգոնությունը, սակայն դա բնավ չէր ազդում ցեղասպանական քաղաքականության վրա, որը նույն թափով շարունակվում էր:

Հայոց ցեղասպանությանը զուգահեռ՝ թուրքական իշխանությունները վարում էին նաև հայերի զանգվածային ունեզրկման քաղաքականություն: Այդ հակաիրավական գործընթացը «օրինականացնելու» նպատակով ընդունվեցին «**Պատերազմական և քաղաքական արտակարգ պայմանների անհրաժեշտության բերումով տարագրված հայերին պատկանող անշարժ և շարժական լքյալ գույքերի վարչական կարգադրությունների մասին**» հրահանգները կամ, այսպես կոչված, «Լքյալ գույքի մասին» առաջին օրենքը և դրանից բխող «**Այլ վայրեր տեղափոխված անձանց ունեցվածքին, պարտքերին և լիազորագրերին վերաբերող կարգադրությունների մասին**» հրահանգները կամ «Լքյալ գույքի մասին» երկրորդ օրենքը, որոնցով «լքյալ» հայտարարված տեղահանված հայերի ունեցվածքն իբր անձեռնմխելի էր և ի պահ էր հանձնվում թուրքական պետությանը⁴³: Սակայն գործնականում դա հանձնվում էր վերջինիս տնօրինմանը և կեղծ աճուրդներով

39 Տե՛ս նույն տեղում, էջ 167-168:

40 Տե՛ս նույն տեղում, էջ 192:

41 Տե՛ս նույն տեղում, էջ 236:

42 Տե՛ս նույն տեղում, էջ 177:

43 Տե՛ս **Լեոն Վարդան**, Հայկական տասնհինգը եւ հայերու լքեալ գոյքերը, Պէյրուք, 1970, էջ 157: Տե՛ս նաև **Ղազարեան Հ.**, Հայոց լքեալ գոյքերու և կալուածքներու թալանը թուրքերու կողմէ, «Հայրենիք», Պոսթըն, 1964, N 6-7:

չնչին գումարով նվիրաբերվում մահմեդական բնակչությանը կամ պետականացվում⁴⁴:

Բնական է, որ իր նամակներում և հողվածներում Միսաքյանը պետք է անդրադառնար նաև տեղահանված ու կոտորված հայերի ունեցվածքի կողոպուտի և թալանի դեպքերին⁴⁵: Հայկական բնակավայրերը հայերից մաքրելուց հետո իշխանությունները թուրքական թերթերում անընդհատ կոչեր էին ուղղում մահմեդական մուհաջիրներին, որ ներկայանան պետական հանձնաժողովին՝ տեղավորվելու համար: Տրվում էր երկու շաբաթ վերջնա ժամկետ, որից հետո նրանք իբր թե պետք է գրկվեին պետական օժանդակությունից⁴⁶: Ջեթունից տեղահանված և բնաջնջված հայերի տներում իշխանությունները վերաբնակեցնում էին մուհաջիրներին: Այդ նպատակով կառավարությունը խոշոր գումար էր հատկացրել և պատվիրակություն գործուղել՝ տեղում հայերի հողերը վերաբնակիչների միջև բաշխելու համար⁴⁷: Բուրսայում գաղթականներից խլել էին նույնիսկ կալվածաթղթերը, թեև առանց դրանց էլ հայերի տներն արդեն հանձնվում էին մահմեդականներին⁴⁸: Այս կերպ երիտթուրքերը ձգտում էին օր առօր մահմեդական վերաբնակիչներին տեղավորելու հայերից ազատված բնակավայրերում և դրանով բացառելու հրաշքով ողջ մնացածների վերադարձի և իրենց ունեցվածքին տեր դառնալու չնչին հնարավորությունն անգամ:

Կայսրության տնտեսության տարբեր ճյուղերում հայերի կարևոր դերի և նրանց տեղահանության հետևանքով այդ ոլորտներում ստեղծված աղետալի վիճակի մասին է վկայում Միսաքյանի հայտնած ուշագրավ այն տեղեկությունը, որ երբ թուրքական իշխանությունները Անատոլիական երկաթուղային ընկերությունից պահանջել են աշխատանքից ազատել 800-900 հայ ծառայողներին, տնօրենը պատասխանել է, որ այդ դեպքում երկաթգիծն ընդհանրապես կդադարի գործելուց⁴⁹:

Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային կոտորածների և տեղահանությունների մասին Միսաքյանից ստացվող օպերատիվ տեղեկությունները չափազանց կարևոր նշանակություն ունեցան Առաջին աշխարհամարտի ժամանակ Աստանտի և Քառյակ դաշինքի երկրների միջև ընթացող քարոզչական պատերազմում: Ինչպես հայտնի է, Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և հետագայում նրանց միացած Բուլղարիան իրենց մամուլով և քարոզչությամբ ամեն կերպ փորձում էին կասեցնել դաշնակից Օսմանյան կայսրությանը վարկաբեկող տեղեկությունների տարածումը, լռեցնել հայերի

44 Տե՛ս Baghdjian K. K., The confiscation of Armenian properties by the Turkish Government said to be abandoned, Antilias, Printing House of the Armenian Catholicosate of Cilicia, 2010, էջ 174:

45 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 175:

46 Տե՛ս նույն տեղում, էջ 274:

47 Տե՛ս նույն տեղում, էջ 97:

48 Տե՛ս նույն տեղում, էջ 324:

49 Տե՛ս նույն տեղում, էջ 163:

զանգվածային բնաջնջման մասին վկայությունները, ինչը խիստ բացասական ազդեցություն էր ունենում ոչ միայն թուրքական պետության, այլև հենց իրենց միջազգային հեղինակության վրա: Մինչև Բուլղարիայի՝ Եռյակ դաշինքին միանալը Միսաքյանի ուղարկած նյութերի մի մասը հրատարակվեց Սոֆիայում լույս տեսնող «Հայաստան» թերթի 1915 թ. համարներում⁵⁰: Այդ հոդվածներով Միսաքյանը ոչ միայն փաստարկված ձևով ցույց էր տալիս թուրքական իշխանությունների կողմից հայերի բնաջնջման ծրագիրն իրականացնելու հետևողական քայլերն ու գործողությունները, այլև վեր էր հանում նրանց կողմից այդ հանցավոր գործողություններն արդարացնելու կամ հիմնավորելու քարոզչական հնարքները:

Քաջ հայտնի է, որ Հայոց ցեղասպանության ժխտման և նենգափոխման թուրքական պաշտոնական «հայեցակարգի» հիմքերը դրել է ինքը՝ այդ հանցագործության գլխավոր կազմակերպիչներից մեկը՝ Թալեաթ փաշան, հենց դրա իրագործման ընթացքում: Նրա նախաձեռնությամբ երիտթուրքերի կառավարությունն ընդունեց «Տեղահանության մասին» օրենքը, որով հայերի դեմ իրականացվող հանցավոր քաղաքականությունը «հիմնավորելու» նպատակով հորինվեցին և առաջին անգամ շրջանառվեցին վերջիններիս կողմից իբր «լրտեսություն» կամ «դավաճանություն» կատարելու, «զինված ապստամբություն» բարձրացնելու, ռազմական անհրաժեշտությունից ելնելով՝ նրանց «անվտանգ վայրեր տեղահանելու» և դրանցից բխող մի շարք այլ շինծու վարկածներ⁵¹:

Իր նամակներում Միսաքյանը տեղեկացնում էր, որ ձեռքի տակ ունի ոստիկանական թերթի օրինակ, որի էջերում տպագրված են ռումբերի, հարյուրավոր հրացանների, պայթուցիկ նյութերի և զինամթերքի մի ամբողջ զինանոցի 3-4 լուսանկարներ, որոնք իբր խուզարկության հետևանքով հայտնաբերվել են Կեսարիայում և Տիգրանակերտում (Դիարբեքի) ՀՅ Դաշնակցությանը պատկանող պահեստներում*: Կարծիք է հայտնվում, որ այդ նյութերը հրատարակվել են խուժանին և ոստիկանությանը կուսակցության դեմ հրահրելու նպատակով⁵²:

Միսաքյանը նշում էր, որ հայ ժողովրդի բոլոր կենսունակ տարրերը կայսրության դեմ ոչ մի դավ չեն նյութել, ինչպես փորձում էին դա ներկա-

50 Տե՛ս նույն տեղում, էջ 10:

51 Տե՛ս **Տատրյան Վ.**, Հայոց ցեղասպանության ժխտման հիմնական փաստարկները. Աղավաղման և կեղծարարության ուսումնասիրություն, Եր., 2005:

* 1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի կողմից ընդունվեց համատեղ հռչակագիր, որով դատապարտվում էին հայերի զանգվածային կոտորածները, որոնք որակվում էին «մարդկայնության դեմ» կատարված հանցագործություն, և պատասխանատվությունը դրվում էր թուրքական իշխանությունների վրա: Դրանից հետո երիտթուրքական կառավարությունն ամեն կերպ փորձում էր հերքել այդ մեղադրանքները և արդարացնել հայերի դեմ իրականացվող հանցավոր քաղաքականությունը: Այդ նպատակով թուրքական մամուլում կեղծ լուսանկարներ հրապարակվեցին, որոնցով փորձ էր արվում «հիմնավորելու» հայերի «դավադրության և դավաճանության» վարկածը, ինչի հետևանքով իբր իրենց կողմից պատասխան պատժիչ գործողություններ են ձեռնարկվել:

52 Տե՛ս Մեծ եղեռնի առաջին վավերագրողը, էջ 250-251:

յացնել իթթիհատականները: Ավելին՝ հենց վերջիններս են դավադրություն ծրագրել հայ ժողովրդի դեմ⁵³: Հեղինակի կարծիքով՝ դավադրության մասին պնդումները «Իթթիհատին» անհրաժեշտ էին իր գործողություններն արդարացնելու, ինչպես նաև մահմեդական խուժանին հայերի դեմ գրգռելու նպատակով⁵⁴:

Իր հողվածներում Միսաքյանը հեզնում էր թուրքական իշխանությունների այն արդարացումները, որ Զեյթունից հայերին բռնագաղթեցրին ապստամբության, իսկ Կարինից՝ ռուսական զորքերի առաջխաղացման պատճառով, և դրանք ռազմական անհրաժեշտությունից բխող ժամանակավոր որոշումներ են: Միսաքյանը հարց էր տալիս, թե այդ դեպքում ինչու են հայերից մաքրում Սեբաստիան, Խարբերդը, Մալաթիան և Նիկոմեդիան, որոնք ռազմական գործողություններից բավական հեռու են և կապ չունեն պատերազմի հետ⁵⁵:

Ամփոփելով շարադրանքը՝ արձանագրենք, որ Շավարշ Միսաքյանի նամակները, հողվածներն ու հուշերն ամփոփող ժողովածուի անուրանալի արժեքն այն է, որ հայ ժողովրդի համար այդ ճակատագրական շրջանում Օսմանյան կայսրությունից նրա հաղորդած օպերատիվ և հավաստի տեղեկատվության միջոցով հնարավոր դարձավ միջազգային հանրությանն իրազեկել այն մասին, թե իրականում ինչ է կատարվում հայ բնակչության հետ՝ ի հեճուկս թուրքական պետության և նրա դաշնակիցների կողմից տարածվող ապատեղեկատվության: Իր նամակներում և հողվածներում Շավարշ Միսաքյանը հաղորդել է այնպիսի տվյալներ ու տեղեկություններ, որոնք այդ պահին պարզապես հնարավոր չէր այլ աղբյուրներից իմանալ: Հետագայում դրանք հաստատվել կամ լրացվել են ավելի ուշ հրատարակված փաստաթղթերով ու նյութերով: Վստահաբար կարելի է ասել, որ Հայոց ցեղասպանության պատմության օբյեկտիվ վավերագրման տեսանկյունից Շ. Միսաքյանի աշխատությունն ունի առաջնային սկզբնաղբյուրի նշանակություն, որի նյութերն այլ աղբյուրների հետ համադրելով՝ հստակ ժամանակագրությամբ կարելի է շարադրել հայ ժողովրդի համար այդ ճակատագրական ժամանակահատվածի օբյեկտիվ պատմությունը:

Արմեն 3. Մարության *Պատմ. գիտ. դոկտոր*

Արմեն 3. Մարության – 60-ից ավելի գիտական հողվածների, հայերեն, ռուսերեն և անգլերեն 10 գրքերի հեղինակ և փաստաթղթերի չորս ժողովածուների կազմող: Գիտական հետաքրքրությունների շրջանակում են

53 Տե՛ս նույն տեղում, էջ 242:

54 Տե՛ս նույն տեղում, էջ 244:

55 Տե՛ս նույն տեղում, էջ 295:

Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմության, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրները:

Էլ. հասցե՝ mararmts@yahoo.com

Summary

THE FIRST DOCUMENTALIST OF THE ARMENIAN GENOCIDE. SHAVARSH MISAKIAN, Ed. by Ye. Pampukian, “Khachik Papikian Foundation”, No. 9, Antelias, 2017, 483 pages

Key words – Ottoman Empire, Constantinople, ARF Dashnaksutyun “Temporary Body”, arrests of Armenian intellectuals, deportation and massacres of Armenians.

In 2017 in Antelias (Beirut), edited, with a foreword and noted by Honored Historian Yervand Pambukyan, the work of a member of the ARF Dashnaksutyun Central Committee of Constantinople – a well-known publicist Shavarsh Misakyan was published, which is a collection of letters, articles and memoirs of the author. Based on the information obtained from the letters and articles of Misakian at the moment of the crime, the successive stages of the genocide policy pursued by the Turkish authorities in relation to the Armenian population of the Ottoman Empire are revealed.

The indisputable value of Misakian’s work lies in the fact that in the fateful period of history for the Armenian people, the operational and reliable information sent by him from the Ottoman Empire informed the international community about what was really happening with the Armenian population, despite the misinformation about the mass extermination of the Armenian population spread by the Turkish state and its allies. In his letters and articles, he provided such information that at that time it was simply impossible to obtain from other sources, which was later confirmed and supplemented by documents and materials published later.

It can be stated with confidence that from the point of view of objective documentation of the history of the Armenian Genocide, Sh. Misakian’s work is a valuable source, the materials of which, when compared with other sources, will allow compiling an objective history of that crucial period for the Armenian people in a clear chronology.

ПЕРВЫЙ ДОКУМЕНТАЛИСТ ГЕНОЦИДА АРМЯН. ШАВАРШ МИСАКЯН / Под ред. Е. Памбукяна, «Фонд Хачик Папикян» - N 9, Антилиас, 2017, 483 с.

Ключевые слова - Османская империя, Константинополь, «Временный орган» АРФ Дашнакцутюн, аресты армянской интеллигенции, депортация и массовые погромы армян.

В 2017 г. в Антилиасе (Бейрут) под редакцией, с предисловием и примечаниями заслуженного историка Ерванда Памбукяна вышла в свет работа члена Константинопольского ЦК АРФ «Дашнакцутюн», известного публициста Шаварша Мисакяна, которая представляет собой сборник писем, статей и воспоминаний автора. На основе сведений, полученных из писем и статей Мисакяна именно в момент совершения преступления, выявляются последовательные этапы политики геноцида, проводимой турецкими властями в отношении армянского населения Османской империи.

Неоспоримая ценность работы Мисакяна заключается в том, что в роковой для армянского народа период истории отправляемая им из Османской империи оперативная и достоверная информация известила международное сообщество о том, что на самом деле происходит с армянским населением, вопреки той дезинформации, которую о массовом истреблении армянского населения распространяли турецкое государство и его союзники. В своих письмах и статьях Мисакян предоставлял такие сведения, которые в то время просто невозможно было получить из других источников, что впоследствии подтвердилось и дополнилось опубликованными позже документами и материалами.

С уверенностью можно констатировать, что с точки зрения объективной документации истории Геноцида армян, работа Ш. Мисакяна имеет значение первоисточника, материалы которого при сопоставлении с другими источниками позволяют в четкой хронологии составить объективную картину трагического для армянского народа периода.

REFERENCES

1. Armjanskij vopros I genocid armjan v Turcii (1913-1919). Materiali Politarxiva Kajzerovskoj Germanii, Sost., otv. red., avtor primechanij **V. Mikajeljan**, Jer., 1995 (**In Russian**).
2. **Avakjan A.**, Genocid 1915 g. Mexanizmi prinjatija I ispolnenija reshenij, Jer., 1999 (**In Russian**).
3. Genocid armjan v Osmanskoj imperii. Sbornik dokumentov. Pod redakciej **M. Nersisjana**, vtoroje, dopolnennoje izdanije, Jer., 1983 (**In Russian**).
4. Genocid armjan: otvetstvennost' Turcii I objazatelstva mezhdunarodnogo soobsh'estva, dokumenti I kommentarij. Sost., otv. red., avtor predislovija I kommentarija **Ju. G. Barsegov**, t. 1, M., 2002 (**In Russian**).
5. **Ghazarean H.**, Hayots' lk'eal goyk'eru yev kalvatsk'neru t'alanë t'urk'eru koghmë, "Hayrenik'", Post'ën, 1964, t'iv 6-7 (**In Armenian**).
6. Hayeri ts'eghaspanut'yunë ëst yeritt'urk'eri datavarut'yan p'astat'ght'eri, arajabanë, t'argmanut'yunë yev tsanot'agrut'yunnerë **A. P'ap'azyani**, Yer., 1988 (**In Armenian**).
7. Hayeri ts'eghaspanut'yunë Ösmanyanyan kaysrut'yunum, p'astat'ght'eri yev nyut'eri zhoghovatsu, khmb. **M. G. Nersisyan**, Yer., 1991 (**In Armenian**).
8. Hayots' ts'eghaspanut'yunë Ösmanyanyan T'urk'iajum. Verapratsneri vkayut'yunner, p'astat'ght'eri zhoghovatsu, hat. I, II, III, khmb. **A. Virabyan**, Yer., 2012 (**In Armenian**).
9. **Lewon Vardan**, Haykakan tasnhingë yev hayeru lk'eal goyk'erë, Pëyruť, 1970 (**In Armenian**).
10. Mets yegheřni arajin vaveragroghë. **Shawarsh Misak'ean**, khmb. **Ye. P'ampuk'ean**, Ant'iliyas, 2017 (**In Armenian**).
11. **Mevlan Zade Rifat'**, Ösmanyanyan heghap'okhut'yan mut' tsalk'erë yev It't'ihadi hayajinj tsragrerë, Yer., 1990 (**In Armenian**).
12. **P'ap'azyan A.**, T'urk'akan vaveragrakan nyut'er Ösmanyanyan kaysrut'yan voch' mahmedakan zhoghovurdneri masin (1839-1915 t't'), Yer., 2002 (**In Armenian**).
13. **Poghosyan H. M.**, Zeyt'uni patmut'yun, Yer., 1969 (**In Armenian**).
14. Russkije istochniki o genocide armjan v Osmanskoj imperii 1915-1916. Sost. **G. A. Abraamjan, T. G. Sevan-Xachatrjan**, Jer., 1995 (**In Russian**).
15. **Sahakyan R., Khudaverdyan K.**, Hayeri ts'eghaspanut'yunë tasnamyakneri luysi nerk'o, Yer., 1995 (**In Armenian**).
16. **Sahakyan R.**, Ts'eghaspanut'yan patmut'yunits', Yer., 1990 (**In Armenian**).
17. **Svazlyan V.**, Hayots' ts'eghaspanut'yun. Akanates veraprogħneri vkayut'yunner, Yer., 2015 (**In Armenian**).
18. **Tatryan V.**, Hayots' ts'eghaspanut'yan himnakan p'astarknerë. Aghavaghman yev kegħtsarut'yan usumnasirut'yun, Yer., 2005 (**In Armenian**).